

ՏՆՕՐԷՆ-ԽՍԲԱԳԻՐ


ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ ուր եւ քրոսիւն
պիտի Ե ուղղել առ

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS

Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՇԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տեղի. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան Գրանի 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ քրոսիւն եւ չի տրուիր:

ՏԻԳՐԱՆ ՉՈՒՅԱՃԵԱՆ

Վերջին տուհանդակը գոյթ մը բերաւ
Իզմիրէն : Տիգրան Չուհաճեան անցեալ երեք-
շաբթի օր, անընդմեջ տառապանքներէ ետքը որ
ֆիզիքականէ աւելի հոգեկան, բարոյական
էին, հոգին աւանդերէ ազգային հիւանդա-
նոցին մէկ անկիւնը :

Տաղանդաւոր, մեծ հայերուն ճակատա-
գրային վախճանն է այդ : Դուրեան, Աղամ-
եան և Պարոնեան այս երեք նշանաւոր դէմ-
քերն ալ մահաքօթին պէս, արուեստին դա-
գաթնակէտը հասնելէ վերջը, խեղճութեան,
թշուառութեան մէջ վերջացուցին կեանքեր-
նին :

Տարաշխարհիկ բոյսերուն պէս, որ մեր
կլիմաներուն տակ չեն կրնար ապրիլ, ուս-
այն հայերը որ սովորական մակարդակէն վեր
ըլլալու նախասահմանուած էին, արուեստա-
գէտ, գրագէտ, հրապարակագիր չի կրցան
դիմանալ մեր տոհմային անտարբերութեան,
մեր նախանձոտ ու ժլատ նկարագրին,
և այսպէս խամբեցան դիտիկոր, լքեալ
և յուսահատ :

Չուհաճեանի մահը լալէ աւելի մեր անկ-
եալ բարքերուն խեղճութեանը վրայ ողբալու
տեղն է հոս :

Չորս միլիոն հայերու մէջ մէկ հատիկ
ըլլալ, ինչպէս էին անդուգական գերասանը
Աղամեան, անբաղդատելի բանաստեղծը
Դուրեան և անմիջեղին Պարոնեան և մեռնիլ
հացի կտորի մը կարօտին մէջ, հիւանդանոցի
անկողին վրայ, օ՛հ, ի՞նչ անուր, ի՞նչ ու-
ղորմելի դաժաւար մը կուտայ, Աստուած իմ,
մնացեալ չորս միլիոնին վրայ :

Ապամահ փառքերու ազգն ենք մենք :

Դուրեանը մեծ բանաստեղծ հուշակուե-
ցաւ Իսկիւտարի բարձանց վրայ նոճի մը
տակ հանգչելէ ետքը : Աղամեան ճիշդի գե-
րեզմանատան մէջ միայն մեծ գերասան ըլլալուն
հաւատաց : Պարոնեան մեռնելէն ետքը Պարոն-
եան եղաւ : Չուհաճեան հիւանդանոցի մէջ մեռ-
նելուն սպասելու էինք ատանկ մեծ կորուստ
մը ըրած ըլլալնիս զգալու համար :

Նիւթապաշտ, պզտիկ հոգի ունեցող ազգ
մը ըլլալնիս այն ատեն աւելի յայտնի կըլլայ
երբ ատանկ մեծ կորուստներու առջեւ կը գըտ-
նենք մենք զմեզ :

Մեր ապականուած բարքերով՝ հազար ու-

կի կտակ ընող հայը աւելի կը յարգենք քան
թէ մեծ, արտասովոր տաղանդ ունեցող հայը :

Տարին անգամ մը պատարագ, եկեղե-
ցիին բալը քանդակուած մարմարին մը, ծաղ-
կեփունջ ծաղկեփունջի վրայ, պատրիարքական
կոնդակ չորս դին, որովհետեւ կիրակոս աղային,
կամ Մարկոս էֆէնտինին մէկը կտակ մը ըրած
է և կամ միտք ունի ընելու :

Ազգային արժանապատուութիւնը մէկ
կողմ կը դրուի, տկարին իրաւունքը կը բռն-
նաբարուի, սինքըր կեղծաւորութիւնները ը-
նելու հարկին մէջ դրուած կը տեսնենք մենք
զմեզ յաճախ, պատուելու համար աղտոտ վա-
ճառականի մը կամ բարոյական չունեցող վաշ-
խառուի մը կտակը որով ազգին քանի մը հա-
զար ոսկի պիտի գայ՝ ասոր անոր ափերուն
մէջ բզկտուելէ վերջը :

Չուհաճեան սակայն, այդ կարգի հարուստ-
ներէն աւելի կարծէ մեզի համար : Հազարներով
ոսկի խոստացող բայց չի տուող հայեր շատ ու-
նինք և պիտի ունենանք ալ, բայց Ձեմիրէ
մը, Լեպրէպիմի մը հեղինակող ուրիշ չենք
ունեցած և գուցէ ալ չունենանք :

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ
ՎԵՐԱԴԱՐՁԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դադարեալներու վերադարձի պայմանները ի
սկզբան կործնուածին չափ մեղմ չեն : Աւստի այդ
մասին մեր առած ստորոգ տեղեկութիւնները :

Օտար երկիր գաղթած հայ մը, որ Պոլսի կը
վերադառնայ, պիտի է նախ հաստատէ այնտեղ ըն-
տանիք ու գործ ունենալու : Ետոյ, Ազգ. Պատրի-
արքարանի կողմէ իր անձին նկատմամբ տրուելիք
ապահովութեան զատ, պարտաւոր է ցցունել բանի
մը երաշխաւորներ — ի հարկին մինչեւ հինգ հոգի —
որոնք զիրար պիտի երաշխաւորեն յաջորդաբար :
Վերադարձողը ձեռքն ունենալու է օրինուոր ան-
ցաղի, իր մեկնած երկրին օտ. հիւպատոսին կամ
սրբապետի կողմէ եւս վաւերացած :

Վերադարձող անձերուն՝ օտար գաղթավայրե-
րու մէջ վարած կեանքը և ունեցած յարաբերու-
թիւններն ալ նկատողութեան կառնուին եղեր :

Պոլսոյ վերջին թերթերու բարբերուն նույնով,
ամեն շաբթու Վառնայէն և Պոլսի քաղաքի
կողմերէն բանի մը հարկը հայ գաղթական կը վերա-
դառնան, որոնք՝ օրինական ձեւակերպութիւններու
կատարումէն ետք՝ իրենց տունները կը խրվոյն : Վար
գրուողները քիչ են, 100-ին մէջէն 8—10 հոգի, ու
րոնց կացութիւնը եթէ չի համապատասխաներ վե-
րեւ յիշուած պայմաններուն, կը բանտարկուին ու կը
հարցաքննուին :

Այս կերպի օր, Գահիրէի Ս. Աստուածածին ե-
կեղեցին մէջ կարգադրուեցաւ պատրիարքական պաշ-
տօնագիր մը, գաղթականներու վերադարձին վերա-

բերող, որուն մէկ սրտածէնն ալ Ազգապատրիարքի տի-
տի խրկուի : Առաջնորդարանին կողմէ, որպէս զի վե-
րադառնալու փափագ ունեցողները կատարեալ զի-
տակցութիւն ունենան իրաց վիճակին ու ըստ այնմ
որոշեն իրենց մեկնումը :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Թուրքիոյ և Պոլսի քաղաքացիութիւն-
ներուն և Մակեդոնիոյ յեղափոխական գոմի-
թէներու ընթացքին վրայ հետեւեալ տեղե-
կութիւնները կը հաղորդուին Սոփիայէ :

Կարծողներ կան թէ դարեան առաջին
օրերուն, ձիւները հաշտուին պէս, խառնու-
թիւններ ծագին ի Մակեդոնիոյ : Սակայն,
պաշտօնական չըմանակներու մէջ, կը հաւաս-
տեն թէ առ այժմ վախու բան չի կայ, և
թէ Կ. Պոլսոյ ու Սոփիայի միջեւ բարեկամա-
կան յարաբերութիւնները խանգարուած չեն՝
Իսկիւպի մէջ գործուած խժժուածութիւննե-
րուն պատճառով : Չարը և Աստուրիոյ կայսրը
խորհուրդ կուտան թէ՛ Երւոյնդի պալատը և
թէ՛ Ֆէրիսնանտ իշխանին որպէս զի որ և է
չանք չի խնայեն՝ թուրքիայի վարական տոհ-
մանագլխին վրայ խաղաղութիւնը պահպա-
նելու համար :

Ասով հանգերձ, Պաշխանահի Ռուհիսն-
դակ լրագիրը, որ Պոլսի քաղաքացիութիւն
է, կը շեշտէ երկու երկիրներուն միջեւ պա-
տահած վերջին միջադէպները : Իսկիւպի ուս-
տիկանութեան խիստ ընթացքը պոլսիւրնե-
րուն նկատմամբ և թուրք զօրքերուն համա-
խմբումը գէպի Բըրճայիի ու թիւրքիկ սահ-
մանագլխները : Պոլսի թերթը երկրաշարժի
երեւոյթ մը կը համարի օտ. բանակի մը հա-
մախմբումը Հուստուրի լեռներուն և Ազգիա-
նուպոլսոյ կողմը, և խորհուրդ կուտայ իշխա-
պետութեան՝ կալմ և պատրաստ գտնուիլ
որեւէ պատահականութեան :

— Գերման և աւստրիական զօրքերուն
Կրէտէի քաղաքներուն առջեւ, Բօքոքո Ռօմանօ
կը յայտարարէ թէ սխալ է կարծել որ կղզին
խաղաղացման գործը միւրոյն Ռուսիոյ, Ֆրան-
սայի և Անգլիոյ պիտի թողուի : Երբեակ նի-
զակակցութիւնը կազմող երեք պետութիւն-
ներէն գոնէ մէկը, կըսէ, չի պիտի հեռանա,
կրէտական շուրերէն : Իտալիա՝ Ֆրանսայի
Անգլիոյ և Ռուսիոյ հաւատար չահեր ունի պաշտ-
պանելիք Միջերկրականի մէջ, հետեւաբար չի
կրնար անմասնակից մնալ Կրէտէի ապագային
վերաբերող վէճերուն ու բանակցութիւններուն

—Կ. Պոլսէն Ռիւզէրի հեռագիր մը կը հաղորդէ թէ Դուռը չըջարեալիս մը ուղղելով տէրութիւններուն, Կրէտէի կուսակալութեան պաշտօնին համար ընտրելի կառաւարկէ Գարաթէօտօրի փաշան, օսմ. ծառայութեան մէջ գտնուող յոյն մը :

—Փառ Տ'Ալէքսանտրի Կ. Պոլսոյ թըղթակիցը կը գրէ մարտ 23 թուականով .

«Պոլսոյ ոստիկանութիւնը վերականգն հայերը ձերբակալել, պատրուակելով թէ կը դաւադրեն : Ձերբակալմանց ու բանտարկութեանց շարժառիթն է բարձրաստիճան թուրք պաշտօնատարի մը սպասաւորին հայու մը կողմէ սպաննուիլը, ինչպէս նաեւ Բալէշի ոստիկանապետին սպաննութիւնը աւագակներու ձեռքով : Երկու ոճիրներն ալ զուտ անձնական վրէժխնդրութեան գէպքեր են : Սակայն ոստիկանութիւնը որ այնքան հոգածութեամբ կը հսկէ Սուլթանին ապահովութեան վրայ, պարզ մարդասպանները դաւադիրներու փոխակերպեց իսկոյն և սկսաւ տանեակներով բռնել անոնց ենթադրական մեղաւորները » :

—Շաբաթ օրը, Յրանսայի երեսփոխանական ժողովին մէջ հարցապնդում ուղղուեցաւ կառավարութեան՝ իր արտաքին քաղաքականութեան վրայ, և ինչպէս դիւրին է գուշակել, Պ. Հանօթօ դիւանագիտական բացատրութիւններով ելաւ մէջէն ու խնդիրը փակուեցաւ, նախարարութեան վրայ վստահութեան քուէով մը, 111ի դէմ 300 : Կրէտէի վրայ խօսելով, արտաքին գործոց նախարարը յոյս յայտնեց թէ ի մօտոյ կարգադրութիւններ ըլլան այդ կողմի մասին :

—Անգլիոյ խորհրդարանին մէջ ալ, մըթըր Գըրընը՝ ըրաւ Ֆիճմօրիսի մէկ հարցման պատասխանելով՝ ըսաւ թէ տակաւին ոչ մէկ միջոց ձեռք չառնուիր Եօրկիոս իշխանը Կրէտէի կառավարիչ կարգել տալու համար :

Միշտ անթափանցելի՝ այս արտաքին գործոց նախարարներուն յայտարարութիւնները սովորական մահկանացուներու համար :

—Գերմանիոյ կայսրը վերջապէս իր փափագին հասաւ : Նաւատորմին յաւելման համար խորհրդարանէն խնդրած վարկը, որ քանիցս մերժուած էր, այս անգամ քուէարկուեց :

—Վալինկիթընէն կը հեռագրեն թէ նախագահ Մաք Քիլնէ խորհրդարանին հաղորդէր է քննիչ յանձնախմբին տեղեկագիրը որ կեզրակացունէ թէ Մէյն զրահաւորին պայթուի արտաքին պատճառէ մը առաջ եկած էր ու ոչ մէկ պատասխանատուութիւն չի հաստատուէ : Այս տեղեկագիր Սպանիոյ պիտի խրկուի որուն արդարադատ ոգին ու պատուաւորութեանը վրայ վստահութիւն կը յայտնէ նախագահը :

—Լորտ Սուրպէրի Ռիվիէրա ուղեւորեցաւ, օգտփոխութեան համար : Բժիշկները յայտարարեն են թէ Կլատմօնի հիւանդութիւնն անբուժելի է : Մեծ ծերունին անխուով կերպով լսեց այս վճիռը :

—Յրանսական հանրապետութեան նախագահը Նիս պիտի երթայ՝ Վերթօրիս թագուհիին այցելութեան :

—Չինաստան ստորագրեց այն պայմանագիրը որով Ռուսիոյ կը թողու Բօրթ-Արթիւրը և Թաւ-Լիէն-Վանը : Ռուսական դրօշը կը ծա-

ծանի այդ երկու նաւահանգիստներուն վրայ որոնցմէ հեռացած է չինական զօրքը և ռուս զօրքերը ցամաք ելած են անոնց յաջորդելու :

—Ալթէնքի թերթերը քանի մը մանրամասնութիւններ կուտան՝ Վոլօի մէջ երկու թուրք զօրքերու ձեռքով Տալէճիօ քահանային սպանման պարագաներուն վրայ : Չարագործներն իրենց սպասաւորին հետ եկեղեցի կը մտնեն, յետոյ քահանային խուցը հայր Տալէճիօ կը քնանար, զինուորներն իրենց սուլիններով կը ճեղքորոն մարմինը, եօթը մահացու վէրք բանալով : յետոյ, սպասաւորին ուշիւղվէրի հարուած մը կը պարպէ ու չարագործները խոյս կուտան : քահանան հոգի աւանդելէ առաջ՝ կրցաւ իր սպաննիչներուն նկարագրութիւնն ընել : Մէտրապօլիտին հրամանով, յուղարկաւորութիւնը կատարուեց է յունական եկեղեցիին մէջ, թէեւ հայր Տալէճիօ կաթողիկէ էր, և բոլոր յոյն կղերը մասնակցեցին և արարողութեան :

ԳՐԶԻ ԲՄԱՎԱՃՈՅՐ

ԴԱՄՍԵՍ ԱՌ ՕՍԻՐԻՍ

Երեսուն տարի առաջ բաշտած կնկան ըստանկար մը ձեռքս անցաւ երէկ :

Ժամ մը մտածեցի վրան, Օսիրիս :

Այդ տակերօտպէտ տիկնոջ աչքերը չէին, ոչ քիթը և ոչ ալ բերանը որոնցմով կը հետաքրքրուէի կնկան մը երեսուն տարի առաջուան դէմքը կը նմանի այն փոխանակագրին որ միւրուրդ զեմանի օրինօք կուտ մը չարքեր :

Պարզապէս ըրածս բաղդատութիւն մըն էր այն ատենուան և արդի արդարագրերուն մէջ :

Որքա՞ն փոխուած են, որքա՞ն, այդ երկու անգամ տանըհինգ տարիներուն մէջ :

Աստուած կինը ստեղծած պահուն մտքէն չէր կրնար անցընել թէ օրին մէկը Եւայի թոռնուհիները Մատամ Սէսիլի մը, Միսս Հընթէրի մը և կամ Տի. կին Արաքսիի մը ձեռքերուն մէջ չարչրկուելիք աւարկայ մը պիտի գտանային. ապա թէ ոչ անոր մարմնոյ վրայ անանկ իրենց անկանոնութեամբ հրապուրիչ ելեւէջներ չէր գներ :

Նախախնամութիւնը իր անհուն բարութեան մէջ կինը ստեղծած է Եւայի պէս առանց որեւէ շղարշի պտտելու համար : Բայց մարդկութեան այդ տկար կէտը անհնազանդ գտնուեցաւ աստուածային հրաւանին և քօղարկել ուղեց մարմին մը որ հալուած պըտտելու սահմանուած չէր, ինչպէս կը վրայէ Ս. Պիլքը և այն ամեն գիրքերը որ սուրբ չեն մանուսնեց :

Բայց պարմանային հոն է որ հինգ հազար տարուան մէջ հագուելու եղանակի տարբերութիւնը այնքան մեծ եղած չէ որքան այս վերջի երեսուն տարիներու մէջ :

Հիմա դառնանք ըստանկարին :

Հարուստ ընտանիքի պատկանող կին մըն է այն որուն պատկերը աչքիս դիմացն է այս պահուս : Կուղեօ, սիրելի Օսիրիս, որ միտտեղ բնենք անոր արդարագրը, հետեւէ՝ ինձի :

Աւելի դիւրինը կայ, դոցէ աչքերդ և նայ անցեալին մէջ : 1860ի կինները միտդ բեր և տես որքան պարզ կերպով հագուած են անոնք :

Եկար inventaire ընենք այն ատենուան կանայի հագուստի մը :

Ոտքերը կօշիկ, ձեռնակ գուլպայ, տանց ժառէթիկ, չըջաղեալ մը, զլխարկ գլուխը, այն ալ թեթեւ, արարգ, ձեռքը թաշկինակ մը, Եւ իր մաշքօփին մէջ պարփակուած կին մը այդ արդարագրով ամեն տեղ կերթար :

Բայց հիմա կանանքը :

Այս անգամ ալ վերէն սկսիմք, եթէ կը հաճիս : Գլխարկը՝ ինքնին ցուցահանգէս մըն է թուշուններու, փետուրներու, ծաղիկ, ժապուէնի, տանթէլէի, բուրձլի, յարդի, թաւիշի : Գոյնորու ամբողջ ծիածան մը, ատնց վրայ աւելցնէր երկայն գնդաւեղ մը, վուպէթ մը, մէջի սուպլիւրի համար գործած

ուած մետաքսը, և կունենաւ գոնէ 300 կառմի ծանրութիւն մը :

Հիմա վրայ նորէն տանթէլներ և կամ ժապուէլներ, աւելի վար յօռտածը որուն վրայ —ըջթ ձեռքը վար տա — որուն վրայ պիտի գտնես գոհարեղեններէ զատ մէկ երկու օձիք, թեւեր՝ որոնց կերպասով չորս տղու հագուած կը շինուի, դիտած ես : Մէջքը գօտի, որուն ետեւը նորէն գնդաւեղ մը՝ գոցելու համար չըջաղեալ տէն գոյացած պատուհան մը սրմէ դուրս նայելու տեղ ներս նայել պիտի ուզէիր :

Աւելի վար չըջաղեալ, և ուրիշ խել մը մանրամասնութիւններ զորս թուել թէեւ հաճելի լայց երկայն պիտի ըլլար :

Յարակից պարագաներն են սակայն որ տեղի աչքի կը գործեն և դուրս կը հանեն, վաղեմի և ժամանակակից թուպէթներուն տարբերութիւնը :

Հիմա կին մը դուրս շէլլեր առանց ձեռքը ունենալու նախ զոյգ մը ձեռնոց և ապա rishfել մը որուն մէջ պիտի գտնես, այցեքարտի տուրք և դրամապոնակը, մէկ կամ երկու թաշկինակ, ուրիշ սիրուն պլոտիկ տուփ մը որուն մէջ բուստրոն և հուրը, ժամացոյց մը, տոյակ մը բանտարի, հոտի պղզիկ սրուակ մը, ստեղ, դերձան, գնդաւեղ և Ֆօր. չինա :

Թաթիկներու մէջ պիտի գտնես նաեւ հողմահար մը և հովանոց մը :

Հապա բէլրի՞ճը, պօսն, ֆասա մեկնը :

Միջին հաշուով կէս թօնէլաթոյի հաւասար բնու մը զոր այսօր կը կրեն մեր կիները :

Երբեմն միմիայն թաշկինակ մը կը բռնէին ձեռքերնին զոր յաճախ չըջաղեալ գոտիին մէջ կը տեղաւորէին այդքան ծանրութիւն մը իսկ չի կրելու համար :

Ասիկայ բան մը չէ, տակաւին. տան կառք ունեցող կնկան հանդիպած ես :

Ես անցեալ օր թողդ ունեցայ տան կառքի մը մէջ սպասելու այդ կառքին տիրուհին : Ժամանակս կը ներքէ հետաքրքրութիւն մը յագեցնելու և սկսայ պրպտել :

Ասկէ քանի մը տարի առաջ խոշոր ժամացոյց մը կը գտնէիր այդ կառքերուն մէջ : Բայց այսօր անոր ֆայրակները կը պարունակէին նախ սլոթիկ դեղարուն մը, անքիքիքի, անօքիքի, վերաքիքի, և նայ իսկ սքիքիքի, առանց մառնալու soqիքիքի դեղաւ հասնելը :

Սրուակներ օ քը մէլիսի, օ քը ֆօլօնելի, գլխի ցուրի յատուկ մաքիտ մը, հոտաւելիք աղեր որոնցմով մեծած մարդու մը յարութիւն կրնա տալ :

Հարբուխի դէմ կօմեր, բաթթիլներ հաղի դէմ, քիչ մը շօքօս և քանի մը հատ սլաքուի եթէ Տի. կինը մարեթներ կունենայ երբեմն :

Անգլիս օրուան թերթը, Բրէնիմանին prix courrantը, Գրեյու համար թուղթ, գրիչ, մեքան, պահասան և կտոր մը ծծուն : Մէկ երկու զոյգ ձեռնոց, ի դէպս գործածելու համար : Քանի մը հատ սիկաւէթ, լուցկիկ տուփ մը և արծաթ ունելի մը :

Այս ամէնը տեսայ, Օսիրիս, և սա մտածեցի թէ այսօր հարուստ կին մը իր կառքով պտոյտ մը ընելու համար աւելի շատ բաներու պէտք ունի քան թէ տաճկական մարտումս մը Ոսկեղջիւրէն դուրս ելելու համար :

Բայց, Օսիրիս, յոռուն մեր բարեկամութեան երդում կը ձգեմ որ այս նամակս չի կարդաւ կընկանդ որուն կը ներկայացնեմ յարգանքներս, այնպէս մը որ կը մոռնամ թէ բարեկամս ես :

ԲԱՏԱՄԵՐՈ

ԱՅԺՄԷՈՒԹԻԻՆ

ԺԱՆՏԱՆՏԸ

Այս ահռելի համաճարակը, որուն անունն իսկ տալու կը ստակային մեր պապերն ու մանկիկները՝ մահ տարածած անուանելով զայն, այսօր ամենուրեք բերանն ու ամեն գրչի ծայր կը գտնուի. անոր վրայ կը խօսին ու կը գրեն ինչպէս քիժօյի կամ քոֆաւայի վրայ : Ասիկայ քառակուսի չէր եւ անա՛ եգիպտոսի դռներուն մօտ, ձիստէ կը գտնուի ժանտախտը :

Նախարարաց խորհուրդ, առողջապահական վարչութիւն իրար անցած են, ժողովուրդը մեծահոգութեան մէջ է, յրազիր ու հեռագիր անով կը գրադիրն, եւ միմիայն Մեքէի Շէրիքը ու Հիմազի կուսակալն են որ անխոյն կը մնան, ու կը փորձեն միմիայն իսկ հերքել համաճարակին ներկայութիւնը իրենց միջավայրին մէջ: Էճիւշըն Կազէթ շատ սրամիտ կերպով դիտել տուած էր քե, ժամեսախի յորին պաշտօնական հաստատութիւնը պիտի արգիլէ բնականաբար հազարաւոր ուխտաւորներու այցը, ուսկից հրամական կերպով մեծապէս պիտի վնասուին այդ նահանգներ: Բնական էր որ հերքումներ հասնէին այդ պաշտօնասարներուն կողմէ:

Բայց մարդասիրութիւնը, ժողովուրդին առողջութեան պահպանման հոգը եւ նոյն իսկ երկրին շահը կը պահանջեն որ ասանկ հերքումներու առջեւ ճշդի չի տայ եզրակացական կառավարութիւնը եւ ծրագրուած զգուշական միջոցները ժամ առ ժամ որոշուին ու գործադրուին: Հնդկաստանի Տիւրք օրինակը այժմեան առջեւ է:

Երկուշաբթի օրը, Աղեխանդիոյ առողջապահական վարչութեան հասած հեռագիր մը կը հաստատէր քե ժամեսախի երկու նոր դէպք պատահել է ի ճիստէ. երեքշաբթի՝ եօթը:

Այ վարանելու ժամանակ չի կայ:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Մեզ կը հարցունեն թէ ե՞րբ պիտի դուրս գանք Եգիպտոսի երեսփոխանական ընդհանուր ժողովը, առաջնորդական ընտրութիւն կատարելու համար: Թէեւ, չըլած զրոյցներուն նայելով, այս տարի ալ առաջնորդ ընտրելու տրամադրութիւն չիկայ ազգային պաշտօնական շրջանակներուն մէջ, բայց նոյն իսկ այդ պարագային՝ ընդհանուր ժողովոյ որոշումը եւ Պատրիարքարանի հաւանութիւնը անհրաժեշտ են:

Երուսաղէմի Կ. Պոլոյ պատրիարքական փոխանորդ Տ. Գեորգ Ծ. Վ. Երէցեան որ էլ միածին ուղեւորած էր եպիսկոպոս ձեռնադրուելու, անցեալ չորեքշաբթի Կ. Պոլիս վերադարձեր է: Տ. Գեորգ եպիսկոպոս կը շարունակէ իր փոխանորդական պաշտօնը:

Կիմանանք թէ Բաղաբական ժողովն իր վերջին նիստին մէջ յոյժ կարեւոր որոշում մը տուեր է, այն է... Առաջնորդարանի տպագրական գործերն այլեւս Փարոսի տպարանը չի տպագրել, ինչպէս կընէին մինչեւ ցարդ: Այս որոշման հետեւանօք — որ անտարբեր կը թողու զմեզ՝ իբրեւ զուտ նիւթական խընդիր մը — ետ առնուեցաւ մեզմէ ընկալագրի օրինակ մը զոր յանձնած էին նախապէս Իւ-

րեւ. հայ թերթ, կը փախաբէինք միայն որ փութային ժամ առաջ ուրիշ որեւէ տեղ կատարել տալ այդ ընկալագրի տպագրութիւնը, վասնզի ամեն կողմէ դանդաղանք կը տեղան թէ ի՞նչպէս կըլլայ որ Ազգ. Առաջնորդարան մը՝ նշանախօսութեան, հարսանեկան հրամանի, գերեզմանագնի եւ այլ այս կարգի գործողութեան վերաբերող վճարումներուն փոխարէն արարներէն ընկալագիր կուտայ:

Իզմիրի հայերը փառաւոր ու հանգիստաւոր յուզարկաւորութիւն մը կազմակերպել են Չուհաճեանին: Հայ եւ օտարազգի խուռն բազմութիւն մը հետեւել է դադաղին, որուն կառավարողէր ճուղէփագրի ծանօթ նուազախումբը, հնչեցունելով այն մահերգը զոր ողբացեալ երաժշտապետը յօրինած էր, կ'ըսեն, նոյն իսկ իր վրայ երգուելու համար եւ որ լացնելու աստիճան մեռելական եղանակ մըն է: Դադաղին նուիրուել են 12 պսակ՝ Պալեօզեան, Աղազարեան եւ այլ ծանօթ անձերու եւ ընտանիքներու կողմէ, ինչպէս նաեւ պսակ մը Վիրգինէ Գարագաշեանէ որ ատենօք այնքան շքեղապէս փայլած է Չուհաճեանի օրէնքներուն մէջ իր կատարած դերերովը, մի եւ նոյն ժամանակ իր մասնակցութեամբ աւելցունելով անոնց փայլը: Իզմիրի ազգ. երկսեռ վարժարանաց ուսանողութիւնն եւս, որուն դաշնակի դասեր կուտար երաժշտապետը, պսակ մը նուիրել է:

Ի դէպ է յիշել այստեղ, որ Տիկին Նուարդ որ այնքան գնահատուեցաւ Եգիպտոսի արուեստասէրներուն կողմէ, իր ձայնով ու իր արուեստով, Չուհաճեանի աշակերտուհին է եւ վարպետին ձեռքին տակ մարդուած տարիներով:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍ

Գիտութեան նորագոյն ու կարեւորագոյն գիւտերէն մէկը, X ճառագայթները, Եգիպտոս կը ներմուծուին ու կը գործադրուին հայ արուեստագէտի մը ձեռքով, ինչ որ ընդհանուր կերպով պատուարել է մեզ ամենու համար, իսկ մասնաւորապէս այդ նախաձեռնարկութիւնն ունեցողին համար: Տիար Գարրիէլ Լէքէճեան, ծանօթ ու ճարտար լուսանկարիչը, իր վաճառատան մէջ հաստատած է մասնաւոր սրահ մը, ուր Ռէնթգենեան գիւտը յաջողապէս փորձուեցաւ, եւ հիմակ ընդհանուր ուշադրութեան ու հետաքրքրութեան առարկայ դարձած է. թիւղներն ու վիրաբոյժները մանաւանդ մեծապէս պիտի օգտուին անկից, դժուարին պարագաներու մէջ, վասն զի գիտէք թէ մարմինը գաղտնիք չունի այդ ճառագայթներուն առջեւ որոնք կը թափանցեն ամենէն ծածուկ խորշերը ու կը լուսանը կարեն:

Սֆինքս անգլիական թերթը խիստ համակրական ոճով ու մասնագիտօրէն գրուած յօդուած մը նուիրած է Տիար Լէքէճեանի այս ձեռնարկութեան, զոր խմբագրին անձադր գալցած ուսումնասիրած է: Փարոս ալ իր խնդակցութիւնները կը յայտնէ հրապարակու համակրելի արուեստագէտին:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Փարոս լրագրի տպարանին մէջ վիճակութեան ճիշդ մըն ալ աւելցուած ըլլալով, կը ծանուցանենք արգոյ հասարակութեան քե պատրաստ ենք ամեն տեսակ վիճակագրական գործեր տանձնել զիւրաւարտելի պայմաններով:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Սէրտար Գիշնէր փաշայէ երէկ առտու ստացուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ ամսոյս 26ին, չարաթ օրը, Եգիպտական բանակին 15րդ զօրագունդը Շէնտի համերով զօրքերը ցամաք ելելու եւ յարձակելու են Էմիր Մահմուտի բանակատեղոյն վրայ զոր դիւրութեամբ ցիր ու ցան են ըրած եւ յաղթած են թշնամոյն:

Տէրվինները որոնցմէ 160ը սպաննուած էին փախուստի ճամբան բռներ են, Եգիպտացուց ձեռքը ձգելով 650 զերի երկու սեռէ, 12 ձի, 4 ուղտ, 221 ջրի եւ աւանակ, 14 սնտուկ ուղմամթերք եւ մեծ քանակութեամբ ուտելիք:

Եգիպտացուց կարուստը աննշան է:

— Մինչեւ անցեալ կիրակի օր Եգիպտոսէ մեկնող արաբ ուխտաւորաց թիւը կը հասնի 1,245ի: Ուրիշ 500 ուխտաւորներ Սիւէզ կապասէին մեկնելու համար:

— Աղեքսանդրիոյ Ռաս-էլ-Թիլի պալատին մէջ սովորական նորոգութիւնները փութով առաջ կը տարուին Բարձր. Խորվին մօտաւոր ժամանումին առթիւ:

Առաջիկայ մայիս ամսոյ սկիզբը Ն. Բարձրութիւն պիտի իջնէ Աղեքսանդրիա, ամրան եղանակը հոն անցունելու համար:

— Երկուշաբթի օրը տեղի ունեցաւ Ապտէր Ռահման փաշա Ռուշտի յուզարկաւորութիւնը:

Հանգուցեալ փաշան 86 տարեկան էր եւ Եգիպտական կառավարութեան մէջ ծառայած է երկար տարիներ: Երկաթուղիներու հաստատման ժամանակ ընդհանուր տնօրէնի պաշտօնը վարած է, յետոյ եղած է Էլմուսկան նախարար եւ արարողապետ Խորվ թէվֆիզ փաշայի օրով:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԿԱՏԱՂՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԴԵՂ ՄԸ

Բաւթէօր պարագայ տեղը յոգնած է. քանի որ Գօւնոս անուն թերթին մէջ միտինարին մէկը հետեւեալ դիւրին եղանակը ցոյց կուտայ կատարած շունէ մը խաճնուղները բուժելու համար:

Ահա՛ ինչ կը գրէ այդ միտինարը Պէնկալէն:

Շօրա-Նակքօր, 3 յուլիս 1889

«Տիկիայի մօտ վերջերս ըրած մէկ պրտոյտիս միջոցին, Պուրապուրա ըստած տեղը ակնատես եղայ յաւալի դէպքի մը: Երբ վերանայի մը տակ նստած գրելու զբաղած էի, աչքիս առջեւ, դիմացս, կատարած շուն մը եօթը հոգի խաճաւ: Անմիջապէս ոտքի ելայ եւ հրամայեցի որ երկաթի կտոր մը տաք-

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ

Գ Ա Հ Ի Ր Է
ՄՈՒՍԳԻ ՓՈՂՈՑ

Գ. Է. ՄԵԼՎԱՃԵԱՆ

Գ Ա Հ Ի Ր Է
ՄՈՒՍԳԻ ՓՈՂՈՑ

ցրենք վերքերը տաղելու (cauteriser) համար՝
Բայց տեղացիները վրաս խնդրեցին.
—Հոգեբերի՛ր մի՛ ընէ՛ք ըսին ինծի, մենք
կատաղութեան դէմ հրաշայի դեղ մը ունինք,
պիտի տեսնէք հիմայ ։

Խաճնոց չունը վաղելու վրայ էր . ներ-
կաներէն մէկը գաւազանի հարուածով մը ըս-
պաննեց կենդանին . ուրիշ մը մօտեցաւ դիա-
կին և փորը ճեղքելով լեարդը դուրս հանեց
և կտոր կտոր ընելով խաճնուողներուն հօւմ
հօւմ կերցուց ։

—Ա՛յ եւս վտանգ չկայ , կըսէին ։

Հաւատարմ չէր գար . և զիս աւելի լաւ
մը համոզելու համար , երիտասարդ մը կան-
չեցին որ հինգ տարի առաջ խաճնուած էր
կատաղած չունէ մը և հիմայ ողջ առողջ կը
պտըտէր ։

Չեմ գիտեր թէ Պ. Բասթօրի աշա-
կերաները ինչ կը մտածեն այս մասին . բայց
մեր աչքով տեսածը իրողութիւն մը ըլլալէ
չի դադրիր ։ Մնացեալը բժիշկներուն գիտ-
նալիք բանն է ։

ՄԵԱՄՈՒՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Լոնտոնի օմնիպիւսի բազմաթիւ ընկե-
րութիւններէն մէկը սիկարէթի ինքնաշարժ
գործի մը հաստատութիւն է իր կառքերուն մէջ ։
Ընկերութեան տնօրինութիւնը մտածելով թէ
վերնայարկի ուղեւորներուն մէջ կրնան գըա-
նուիլ ծխամոլներ որոնք իրենց ծխատուփը
տունը մոռցած ըլլան ու սրտնեղութիւն զգան
այս պատճառաւ , ուղեր է անոնց ճաշակին
գոհացում տալու հաճոյակատարութիւնն ու-
նենալ ։ Կառապանին նստարանին ետին գե-
տեղուած է պղտիկ տուփ մը որուն մէջ մէկ
բէնի մը ձգողը երկու սիկարէթ կը գտնէ
իր տրամադրութեան ներքեւ , ինչպէս այստեղ՝
կազմի յատուկ գործիին մէկ մէկ թարիֆա
մը ձգելով լամպաներուն լոյսը կը շարունակ-
ուի ։ Ուրիշ գործի մը լուցքի տուփը կը պա-
րունակէ , որոնք երեւան կըլլեն՝ մէկ ֆար-
թիկի փոխարէն ։ Այս նորութիւն մեծ ըն-
դունելութիւն գտնելու վրայ է անգլիացի ժո-
ղովուրդին կողմէ ։

Ա. Զ. Դ. — Ի Ֆակալա Էմանուէլ Թօփճեանի նորա-
հաստատ խանութին մէջ միշտ պատրաստ կը գտնուի
կոփի և ոչխարի միս ։ Թաւմուքիւն , մաքրութիւն եւ
աժանութիւն ։
2—3



ՆՈՐ ՓՈՒԻ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐՊԵԼ ԿՈՆԵՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ.

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու
սրբոյ հաստատութեան թէ ամսոյս 15-ն սկսեալ
գնած ենք Տարպէլ-Կոնէնայի Հայկական փողոց
և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր
գործառնութիւնները ։ Այդ փողոցի գործելու եղա-
նակին մէջ խնամատ բարեկարգութիւններ ներմու-
ծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունէ
փողոցի մը պէս լիւրջի գոհացնել իրենց փառաշու-
թեամբ զմեզ պատուող յաճախորդները ։

Կը սիրենք յուսով որ պատուական ազգայինք
զմեզ պիտի բաջպերեն մեր այս ձեռնարկին մէջ ։

Ս. Զուրիկեան եւ Եղբարք Հազարդոնեան

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆԵՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհանէս
Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գա-
հրէ հաստատուած է և մեծապէս գոհ թու-
ղուցած իր յաճախորդները , այս անգամ իր
նոր խանութին մէջ (Ս.Թապա Էլ Խաւորա ,
թրամուէյի կայարանին դէմ) ամեն դիւրու-
թիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ . մաք-
րութիւն , արագութիւն ու վայելչութիւն՝ թէ
ածիւման և թէ վարսայարգարութեան մասին ։

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՄԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործու-
թեան համեմատ հաստատուած այս լուսանը-
կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ
կը հանուին գոհացուցիչ գիներով ։

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ
1—10

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ , ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ . ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդ-
ները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործա-
րաններէն իրերու թարմ դեղեր , չափաւոր գիներով ։
Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին ։

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ ։
Թարմ հանգալիկ ջուրեր , անուշահոտութիւն եւն .
Բնորոշական և մանրադիտական քննութիւնք ։
Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծա-
նօթ բժիշկներ ։

Բժշկական ձրի խորհրդածութիւնք ազրաստայ
Համար 37—50

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԷՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԹԻ , ՇՐԱՆՏ ԱԶԱՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ
ու հագուստներ . ԿԱՐԴԻԷ արանց և կանանց
շապիկներ , շրջագդեւաններ , եւն . մաքրութիւն ,
ճշգրտահաշութիւն , և խիստ չափաւոր գին ։

8—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Յունուար 1898

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳԻՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	8 15	9 30	—	3 30	երեկ.	4 45	—	7 15	երեկ.
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	—	4 47	5 29	8 32	12 35	—	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	—	5 45	6 7	9 30	1 44	—	—
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	—	6 26	6 11	—	1 54	—	—
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	—	7 59	7 7	—	3 51	—	—
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	երեկոյ	1 —	9 40	8 7	—	5 50	—	—

ԱՂԵՔՍԱՆԳԻՐՈՅԷ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Օմնիպ.		Էքսորէս		Խառն	Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	երեկ.	2 30	երեկ.	4 15	երեկ.	6 15
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	երեկ.	4 13	5 15	8 6	առտ.	1 9
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	երեկ.	5 43	6 10	9 40	2 56	—
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	երեկ.	6 30	6 14	—	3 6	—
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	երեկ.	7 33	6 52	—	4 25	—
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	երեկ.	8 45	7 35	—	5 50	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ԺԱՄԱՆ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՒՈՑ		ԵՐԵԿՈՅ		ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՒՈՑ		ԵՐԵԿՈՅ	
Գահիրէ	մեկ.	11 40	երեկոյ	7 —	—	Սիւէշ (քարափ)	մեկ.	9 50	—	—	—
Պէնհա	ժամ.	12 28	—	7 48	—	» կայարան	»	—	—	3 30	—
	մեկ.	12 33	—	7 53	—	» Երեկոյ	»	—	—	7 5	—
Ջակաղիկ	ժամ.	1 34	—	8 54	—	Խամաիլիա	»	1 20	—	7 5	—
	մեկ.	1 44	—	9 4	—	» Ժամ.	»	3 7	—	8 53	—
Խամաիլիա	մեկ.	3 40	—	1 —	—	» մեկ.	»	3 17	—	9 3	—
	—	—	—	—	—	» Ժամ.	»	4 13	—	9 47	—
Սիւէշ կայարան	ժամ.	—	—	5 —	—	» մեկ.	»	4 17	—	9 4	—
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	—	—	» Ժամ.	»	5 5	—	10 35	—